

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 176-Ա

7 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 15-ի N 1596-Ա, N 1597-Ա, N 1631-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 5-6-ը իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ՝ ք. Երևան, Քաջազնունի 20.
 - 2) «Շողիկ Կարապետյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Նորքի 9գ. 15.
 - 3) «Արմինե Մինասյան» Ա/Ձ՝ ք. Սևան, Նաիրյան 143/Ա.
 - 4) «Ղազարյան Հայաստան» Ա/Ձ՝ ք. Սևան, Նաիրյան 143-Ա.
 - 5) «Սիրանուշ Քերոբյան» Ա/Ձ՝ ք. Սևան, Նաիրյան 143/2.
 - 6) «Կրպակ» ՍՊԸ՝ ք. Գավառ, Բունիաթյան 2.
 - 7) «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Թաիրովի 15:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Recoverable Signature

X

VERIFIED OCSP 07/07/20 16:10:58 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ